

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՎԵՋԱՓԱԽ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԺՆՆԳԵԼՆ

80-րդ տարեդարձը.

ՌԻԹՍՈՒՆԱՄԵԱՅ ԲԱՐԱՋԻՉՆ ՌԻ ՌԻՍՈՒՑԻՉԸ.

Ներկայ ապրիլ 4-ին լրացաւ Ազգիս Վեհափառ Հայրապետի բազմամրովանդակ կենաց ութսուն տարին. անցեալ թուականի հոկտեմբեր ամսին լրացել էր յիսուն տարի այն օրումանից, երբ լոյս է տեսել առաջին անգամ Նորին Սրբութեան գրաւոր աշխատութիւնը: Ութսուն տարուայ կեանք, որ իւր ժողովրդի կեանքն է եղել. յիսուն տարի գործող գրիչ, որ «Զօդ ծրծեալ Հայաստանեայց շոյտ ըզգաց (քան այլք ամէն) զոգի նախնեացն» — եւ մինք այդ ժողովրդի գաւակներս, այդ ոգեշունչ գրչի արդիւնքներով դաստիարակուած համբաւներս թոյլ ենք տալիս, որ այսպիսի ամենանշանակալից օրեր անցնին անյիշատակ, մինչ յիշել նոցա մնասին՝ Հայոց ալէգարդ Հայրիկին յիշել, եւ այս զատկական տօներին, մտքի ու սրտի հայեացքը դէպի ս. Լուսաւորչի աթոռը դարձնելով տեսնել Նորան այնտեղ հովուապետական գաւազանը ձեռին, դեռ այնչափ կորովի, այնչափ պատրաստակաւ եթէ հնար էր մի նոր ութսունամայ կեանք եւս դնելու Իւր սիրեցեալ հօտի համար՝ ոչ միայն որդիական երախտագիտութեան եւ սիրոյ պարտք էր, այլեւ մի մեծ դաս, կենդանի դասագրքով: Սակայն զուր ժամավաճառ չլինինք. աւելի լաւ է անենք, ինչ որ մեր տկար ուժերով եւ այս նեղ հանգամանքներում անել կարող ենք:

Եթէ մեր Աստուածընտիր Հովուապետի յիսունամայ գործունէութիւնը իւր բոլոր կողմերով չափել ու գնահատել կամենայինք՝ գրականը նորա մէջ մի փոքր, եւ ոչ առաջին, տեղ

կրօնէր. Հայոց Հայրիկն Իւր ժողովրդի հետ աւելի բերան առ բերան, կենդանի քարքառով է խօսել քան գրով. ժողովրդի այն դասը, հազարաւորների այն անգոյն, աշխարհող, խաւարամած ամբոխը, որի հետ զխաւորապէս Նա խօսել է կամեցել, եւ խօսել է այնպէս, ինչպէս ոչ որ ժամանակակիցներից՝ զիւր չգիտէ, եկեղեցւոյ բեմի վերայ է տեսել Իւր Հայրիկին, ազգի տանը, իւր տանը՝ ամէնքի մօտ, ամէնքին մատչելի, ամէնքի համար խորատատու, մխիթարիչ, քարոզիչ եւ ուսուցիչ: Եւ եթէ մենք մեր անգուգական Հայրապետի դարաշափ փառաւոր կենաց ամբողջ արդիւնքը գնահատել, այդ վեհ պատկերի բոլոր դիմագծերը մեր մտքում ամփոփել եւ նոցա մէջ արտափայլող հոգին ծանաշել ենք կամենում՝ պէտք է ամէնից առաջ Նորա խօսելու յիշենք:

Այն փոքրիկ հատոյնները, որ բազմաթիւ հրատարակութիւններով տարածուած են հայաքնակ տեղերի ամենահեռաւոր անկիւններում եւ իրենց ինքնուրոյն ոգւով ու ոճով, իրենց ժողովրդական քնաւորութեամբ՝ սրտի ջերմութիւն, մտքի սնունդ, լեզուի դաս են տուել մի քանի սերունդների՝ առանձնապատուկ պատուաւոր տեղ են գրաւում՝ յիշաւի մեր մանուկ գրականութեան մէջ. մեր ժողովրդական դպրոցների հիմնադիրներից, ուսման եւ կրթութեան առաջին կարապետներից մէկն է Հայոց Հայրիկը. իբրեւ եկեղեցական գործիչ փանահայրական եւ առաջնորդական ասպարէզներում, պատրիարքական եւ հայրապետական աթոռի վերայ, երոպական արքունիքներում եւ հայ գիւղական խրժիթներում՝ Նա դեռ երկար ժամանակ գրաւոր քննադատութեան եւ անգիր զրոյցների նիւթ կմատակարարէ. քայց այդ բոլորի մէջ Նորա հետ պէտք է յիշուին, եւ գուցէ աւելի երկար կ'յիշուին ուրիշ անուններ. գործունէութեան այն ծիւղը, որի մէջ Նա մրցակից չունի, որտեղ Նորա աստուածատուր հանձարն ամենագործող եւ քնական արտայայտութիւն է գտել՝ կենդանի խօսքն է:

Հնուց մնացած մի կարծիք կայ թէ քանաստեղծները ծնուում են, ծարտասանները աշխատելով դառնում. եթէ ուղիղ

խիկ համարներ այդ կարծիքը, որ շատ տարակուսական է—յամենայն դեպս՝ բանաստեղծ ծարտասանները ծնունդ են, եւ այդպէս ծնունդ է Հայոց Հայրիկը։ Այն անօրինակ հրապոյրը, որ ունեցել է Եւրոպայի բերանում՝ կենդանի խօսքը՝ եկեղեցու բեմից հընչէր այն, թէ ուսուցչական ամբիոնից, իբրեւ ծառ խուռն հասարակութեան մէջ, թէ իբրեւ պարզ գրոյց մի հատիկ խօսակցի հետ—արուեստական ծարտարութեամբ յառաջ քերել անհնար է։ Հարկաւ լեզուի ծարտարութիւնը մեծ նշանակութիւն ունի եւ վարժելով կարելի է շատ ձկուն, շատ համոզելի, շատ տպաւորիչ դարձնել այն, բոլորովէն շատ ցնցելի դիմացնին եւ մինչեւ իսկ նորա հատկանշան հակառակն ընդունել տալ։ Բայց տեւական ազդեցութիւն գործելու, մարդոց հոգու խորքը թափանցելու եւ այնտեղ մտքեր ու գազացումներ յեղաշրջելու համար քնատուր շնորհք պէտք է, աստուածապարգեւ շնորհք։ Այդ շնորհքն արուարուստ երեւում է խօսքի պատկերաւորութեամբ, օրինակների բնական կենդանութեամբ, փոխարքերութիւնների անպաճոյճ պարզութեամբ եւլն եւլն։ Բայց դուրս իսկական ոյժը մարդոց սիրտը կարողալու ընդունակութիւնն է։

Այդպիսի ընդունակութեան Հայոց Հայրիկը միացրել է մի գորութիւն, որ այս աշխարհից չէ, որ աւետարանի իսկական պաշտօնեաներն իրենց Երկնաւոր վարդապետից են փոխ առնում՝ եւ որ նոցա դրողով է իմաստաւորում մօտ իշնել, նորա ցաւին ցաւակից, ուրախութեանը ուրախակից լինել մօտենալ եւ հաւատարմիլ նորան, որպէս զի իրենց եւ իրենց զաղափարաստիպին մօտեցնել կարողանան։ Եւ մեր Վեհափառ Հովուապետութեան անմահ կենաց մեծագոյն մասը փոքր մարդոց հետ է անցել, դորանով Եւ այնչափ ժողովրդականութիւն է ստացել, դորանով «Հայրիկ» պանծալի անունը վաստակել։ «Ընդ ամենայնի ամենայն լինել» ըստ առաքելայն եւ իւրաքանչիւրի հետ նորան յատուկ լեզուով խօսել՝ այդպիսի կարողութիւն դարերի ընթացքում՝ հատ հատ առանձնաշնորհեալներ միայն ունենում են, եւ երբ մէկն այդ ընդունակութիւնը գործ է դնում՝ ամենաընդարձակ

չափով՝ դարաւոր քնի մէջ ընկղմած մի ժողովրդի երկիրը յիսուն տարի շրջում է, նորա բոլոր դատակարարի մէջ մտնում, քնիկ հայրենիքի թէ զաղթավայրերի անկիւն չէ մտնում՝ գրեթէ, որ շերեւայ կենդանի քարագը բերանին՝ ո՞վ կարող է այդպիսի գործունէութեան ամբողջ պարունակութիւնը չափել եւ այդ եղանակով ցանաճ սերմերի բոլոր ստուգները հաշուել։ Իւրաքանչիւր խօսք մի սերմ է այստեղ, կայ խօսք, որ նոր չէ մեզ համար, քայց նոր է եղել մեզից առաջ ասորողների եւ է մեզ հետ ասորողներից շատերի համար։ Տեսցած ճշմարտութիւններ կան, որ մինչեւ մի դատակարարից միան իշնեն տանեակ տարիներ եւ դարեր են քաշում։ Իմոք եւ պատիւ այն հմուտ մշակին, որ խաւար հոգիների կորուսցած երկիրը մշակել եւ այդպիսի սերմեր մէջը ցանել կարող է։

Ստորեւ դնում ենք իբրեւ նմուշ Վեհափառ Հայրիկի Վանում՝ պետութեան հրամանով այնտեղից մեկնելիս, խօսած մի քարոզի բեկորները, որոնք հարկաւ իսկականի ստուերն են միայն ներկայացնում։ Դնում ենք նաեւ Եւրոպայի կենաց առաջին շրջանի մի համառօտ ստուերագիծը, համառօտ տեղեկութիւն Եւրոպայի դպրոցական գործունէութեան արդիւնքների մասին եւ այն նախապէս, որով Հ. Արսէն Բագրատունի իւր շնորհակալութիւնը է յայտնում եւ դիտողութիւններն աւելում՝ իրեն նուիրած ուսանաւորի համար։ Այս ուսանաւորը, «Խրքիման Վանեցի Մկրտիչ վարժապետին գովեստը մեր նախնեաց տաղաչափութիւնը նորոգող Բագրատունի Հ. Արսէն վարդապետին», Հայոց Հայրիկի առաջին տպագրեալ գրութեան է, ինչպէս յիշեցինք, Բագրատունի 1849 հոկտեմբեր 5-ի մէջ, որ Եւ գրել է. նոյն այդ տաղաչափութեամբ, նորա գիտովը ոգեւորուած, քայց որի մէջ արդէն, թէպէտ աշակերտ մի «մեծիմաստ եւ քաղմամուտ մեծահոգեւ Հօր», հրաւեր է կարդում՝ նորան.

«Հայր, առաւել արժան էր քեզ ոչ գօտարին քնար հարկանել, «Այլ զքոյր, որ վեր հոգում քաջ եւս հնչի» հայրենոյն։

Խոնարհինք ապա պատկառանք այն «Մեծիմաստ եւ քաղմամբ մեծահոգակ չոր» առաջ, որ Խնքն այնչափ ներդաշնակ կերպով հնչեցրել է 50 տարի շարունակ, եւ տար Աստուած դեռ շաա երկար տարիներ հնչեցնէր հայրենի քնարը: Կ. Վ.

ՀԱՅՐԻԿԻ պատանկութեան օրերն անցած են իւր հօրեղբայր Խաչատուրի առանձին գգուանաց, սիրոյ եւ դաստիարակութեան ներքոյ: Հօրեղբայրն խիտ ջնքմեղանդ եւ ս. Գրոց քաջամուտ մէկն եղած է. ամուսնացած չլինելով իւր բոլոր հոգածութիւն եւ խնամքը դարձուցած է իւր եղբորորդի Մկրտչին վրայ. աչքի առջեւէն չէր հեռացնէր, իրեն ջնքմեղանդ եւ աղօթասէր անձն միշտ իւր հետն առած եկեղեցի կերթար, կրօնական գիտելեաց, եկեղեցական կարգաց եւ ս. Գրոց ուսման մէջ կը կրթէր զինք: Հօրեղբոր Խաչատուրի մահուանէն յետոյ նա այլ եւս որբացած էր. այնուհետեւ կսկսի ինքնօգնութեամբ յառաջ վարել իր ուսումը՝ յամախակի ընթերցմամբ ս. Գրոց եւ եկեղեցական գրեանց, շարականաց՝ յորոց մեծ մասն բերան գիտէր:

22 տարեկան հասակում վանեցի երկու ընկերների հետ ուխտի եկած է ս. Էջմիածին, Կարբեցի Յովհաննէս կաթողիկոսի օրով. աստի ի Վան վերադառնալով ամուսնացած է 1846 թուին. մի կարծ ժամանակէ յետոյ առաջին անգամ պանդխտած է ի Կ. Պօլիս եւ ուսուցչութեան պաշտօն ստանձնած Օտեան եւ Ալվատեան գերդաստանաց մէջ: 1849 թուականին առ Հ. Կոմիտաս Բագրատունին գրած յայտնի ուղերձէն առաջ մի քանի ընտիր ոտանաւորներ գրած է հայկական շափերով: որոնք դեռ եւս չեն հրատարակուած, օրինակ:

Յուագ ի յանդրանիկ դիցազունն մեր
Հայկն քաջազանց պարագլուխ:

Յուագ ի Յովհաննէս Մկրտչին՝ Մեծն
ի ծնունդս կանանց:

Յուագ ի հրաշալի ծնունդ եւ յաստուածայայտնութիւն Յիսուսի Բրիտտոսի Տեառն մերոյ:

Յուագ ի շարշարանս, ի թաղումն եւ
ի յարութիւն Յիսուսի Տեառն մերոյ:

Յուագ ի Մեծն Սահակ եւ ի Մեսրոպ,
պանծալի թարգմանիչս մեր:

Այնուհետեւ 50—51 թուականին հրատարակած է իր երկու Հրաւիրակներ. յետոյ մի տարիի շափ Սոյ վանքին մէջ ուսուցչական պաշտօն ստանձնած է Սսեցի Դուկաս եպիսկոպոսի հրաւիրանք: 1853 թուին այնտեղէն ի Պօլիս վերադառնալով հրատարակած է մի անատորագիր քոչիւր՝ «Բան առ Մխիթարեան միաբանութիւն». նոյն տարւոյ աշնան հայրենիք՝ Վան, դառնալով Աղթամարի վանքին մէջ վարդապետ ծեռնադրուած է. 54 թուին դարձեալ ի Պօլիս, գալով այս անգամ՝ իրեն վարդապետ, Խսկիտարի ս. Խաչի եկեղեցւոյն քարոզիչ կը լինի. այնուհետեւ կսկսի «Արծուի Վասպուրականի» հրատարակութիւնը, որն շարունակելով մի տարի, 1856 թուին Վանայ Վարդապի վանքի վանահայրութիւնը ստանձնելով կը հաստատէ այն վանքին մէջ ժառանգաւորաց դպրոց, տպարան եւ գրադարան: եւ կը շարունակէ «Արծուի Վասպուրականի» հրատարակութիւնը: Սոյն թուականէն յետոյ Հայրիկի գործունէութիւնն հրապարակի վրայ է եւ յայտնի ամէնուն:

Խօսած եմ ձեզ թէ մարդս երբ կուրծք չտայ աշխարհիս փորձութիւններուն, կը նմանի մետաղներու, որք երբ դուրս կը հանեն, բան մը չեն արժեք. ուստի պէտք է կրակ ձգել զայն, որպէս զի ոսկերէն անոնցմէ զտէ արծաթն. այնպէս ալ մարդու կեանք պէտք է բուրայէն անցունել:

Աշխարհիս վրայ դիպուածներ մէկ մէկ փորձանքներ են. այն փորձանք որ մարդոց կողմանէ կը գայ՝ այն է միայն դժուրակ եւ փառ:

Յիսուս իւր տէրունական աղօթքին մէջ ըսաւ. Մի տանիր զմեզ ի փորձութիւնս: Մենք ալ շատ անգամ՝ կը բարեմաղթենք մէկ միւսի համար, որ բարեբաւոյն լինինք. սակայն աշխարհիս փորձանքներ մարդոց համար է. թոյլ, մեղի, դատաւիք, կեամարդի է այն, որ կը փախչէ փորձանքներէն. փորձանքներ կը կշռեն մարդուն ինչպէս փորձաքարն արծաթն եւ ոսկին. աշխարհ փորձաքար մըն է, որին

պէտք է զարնուեն մարդիկ, որպէս զի ճան-
չըցուին: Այս բերնականներ յառաջ բերելով՝ եր-
բէք ձեր մտքէն մի անցուցէք, թէ Հայրիկ իւր
Վանից հեռանալն փորձանք կը համարի. ո՛չ
երբէք: Ծն օրինականներ և ապացոյցներ ցոյց
կուտամ ձեզ որ քաջախերութիւն ունենաք:
Վանի Հայրիկ կը հեռանայ՝ կասէք, այդ ինչ
համար արժէք չունի, սիրելի ժողովուրդ,
մարդ պէտք է գլորուի զարնուի հոս հոն:

Մենք պէտք է ցաւինք որ մեր նախնիք-
ներէն շատ ետ մնացեր ենք. անոնք Խուժա-
տան, Ծուռտտան, Ատրեստան, երկրի զանա-
զան ծայրեր գնացին՝ հետազօտեցին տեսան,
ամբարեցին ու յետ դարձան ի Հայաստան...
աւանդ զի այժմ՝ շատ յետնեալ ժողովուրդ
ենք, յետնեալ՝ ուժի, զօրութեան, հանձարի,
հայրենասիրութեան և ուսումնասիրութեան
կողմանէ. նախնեաց արիական ոգին մարեր է
մեր մէջ, այն որ կը վառէր ժամանակի մար-
դիկ թշնամիների դէմ. ուստի հայ աշխարհ,
եթէ կշիռ դնենք նոյն իսկ 30—50 տարի ա-
ռաջուայ աշխարհի հետ, կը տեսնենք, որ
վերջինի նժար խիստ ծանր է, պատճառ որ
մեր հոգիի արիութիւն այնչափ տկարացեր է,
որ մի փոքր արկածի անգամ չենք կրնար
տոկալ. վախ, վախ:

Ուրեմն մենք այնպէս կը կարծենք, թէ
ներկայ աշխարհի մէջ մեր կեանքի ասպարէզ
երկաթուղիի ճամբու պէս պէտք է հարթ լի-
նի. ո՛չ ո՛չ, նա շատ ելեւէջներ ունի, որոյ
վրայ միշտ պիտի բարձրանանք, ելնենք, իջ-
նանք, սայթաքենք և մերթ էլ պատառող զա-
ղանների հանդիպենք. վայ, հազար վայ անոր,
որի գլխէն չեն անցներ աշխարհիս զիպուած-
ներ: Երբ կը մտածես թէ քեզ համար փոր-
ձանք կայ պատրաստուած, զքեզ փրկելու հը-
նար կը մտածես, հնարիմաց կլինիս. անհոգ
մարդ փորձանք եկած աստէն կապչի, կը սոս-
կայ: Երբ փորձանք դայ, մարդ կը վարժուի
նորա ազդեցութիւններէն գործնական կեր-
պով. հազար փիլիսոփայութիւն, քարոզ և
խրատ չեն կարող հասկացնել, թէ ինչ են
փորձանքներ: Անհոգ և տգէտ նաւավար չի
կրնար գիտնալ թէ երբ պիտի դայ փորձանք,
ինչպէս շատ անգամ կը տեսնենք մեր Աւան-
ցի նաւավարների վրայ. երբ կը տեսնեն մի

զուարթապատ առաւօտ, երկինք երբէք ամպ
չկայ, արեգակ զեղածիծաղ կը փայլի և թէ
մեղմ և առաջնորդող հով մը կայ, երևոյթ-
ներէն խաբուելով իրենց համար պատրաս-
տուած վտանգի վրայ չեն մտածեր երբէք, ծո-
վի վրայ կելլեն: Եզրակացութիւնն յայտնի է...

...Կը ցաւիք աւելի այսպիսի օրերու մէջ,
յորում ժողովուրդ իր ամենէն նուիրական սո-
ներ՝ Եիսուսի չարչարանք, Զատիկան գտու և
ս. Յարութիւն կը տօնէ, Հայրիկ կը յափըշ-
տակուի... միթէ՞ Հայրիկ ելնելով Վանէն
զեղջուկ ժողովրդի եկեղեցիների մէջ պիտի
չկրնայ լսել—Քրիստոս յարեաւ: Ուրախ է
Հայրիկ որ յիշատակներ կը թողու ի ձեզ, իսկ
Ձեր յիշատակներ իւր սրտի վրայ կարճանա-
գըրէ. ես այս վերջինների վրայ պիտի խորհիմ
թերևս կարողանամ մի որեւիցէ դարման գըտ-
նել:

Եիսուս անգութ դատաւորի և զրկեալ
այրիկի առակով մեզ կը սովորեցնէ, որ Աստուած
ժողովրդի ձայն կը լսէ, երբ աղաղակենք առ-
ինքն: Ախ, ան, մեր վարդապետներ այս գա-
ղափար տուած են ժողովրդին, որ Աստուած
միմիայն հանդերձեալի մէջ կը պատժէ չարե-
րին. ո՛չ, ո՛չ սխալ է, Աստուած աշխարհիս
մէջ ալ կը պատժէ չարեր: Ինչու՞ չէք հաւա-
տար որ կին ծով ձգող մարդ ինն տարի ետք
կրնայ պատժուել. ես կը ծանշեմ մի մարդ,
որ Վոսփորի ափունք պատած ժամանակ իր
թշուառ կին ծով ձգեց, ինն տարի ետք օր մը
Թօփհանէի վրայ կը նուարկէր, սոսկալի ալե-
կոծում թի նաւը ջարդ փշուր կանէ, այս
մարդ ծովի յատակ կը խորասուզուի. աշխարհ
դարմացաւ այս բանի վրայ, ես գնացի զո՛հ
եզոյր տեսայ:

...Ահա սուրբ Եակոբի ժողովուրդ, վերջա-
ցնելով խօսքս, այս է իմ վերջի կտակս Ձեզ.
ուսում և դպրոց սիրէք: Մնա՛ք բարեաւ, կը
փափաքեմ, որ Ձեր աղօթք ինչ հետ լինի,
որպէս զի յաջողութիւն գտնամ. եթէ աղօթէք
ինչ համար՝ Ձեր աղօթք Ձեզ վրայ կը դառ-
նայ, զի Հայրիկ որչափ աշխատի՝ Ձեզ համար
է: Հայրիկի կեանքն և շահ ժողովուրդին է.
ուրեմն աղօթեցէք նոյն իսկ Ձեզ համար:

Իսկ ես կուխտեմ հայրենիքս, Վարազայ
սա՛ր, իմ բարեբաւտիկ բնակավայր չմոռանալ

երբէք, անի, անի (լաց): Յոյնակէս չմոռանայ Ձեր բոլոր վիշտեր և աղէտներ: Այո, Հայրիկ Ձեր մէջ ապրած է, զիտէ: Ձեր բոլոր վշտեր և կը հոգայ Ձեզ համար: Կրկրկնեմ սիրելիք, մնաք բարեան, և ես ձեզ կուտամ խաղաղութիւն՝ ոչ իմ, այլ անոր որ երկինքն է:

1850 թուականէն Խրեմեան Հայրեկին հետեոյ աշակերտներ, որոնք յետոյ կուսակրօն քահանայ ձեռնադրուելով Վարագայ վանքի միաբանական ուխտը կազմեցին, զանազան կարևոր պաշտօններ վարելով Վասպուրականի և Հայաստանի այլ և այլ գաւառաց մէջ, սոքա են.

1. Երեմիա եպիսկոպոս Տ. Սարգսեան, երբեմն այցելու հովիւ Հայաստանի, Խարբերդի, Մշոյ և Վանայ առաջնորդ, փոխ վանահայր Մշոյ սուրբ Կարապետի և Վարագայ վանքերի, հեղինակ «Հայրենասիրութիւն Հայոց» անուն ընտիր դրքին:
2. Գրեգորիս եպիսկոպոս Աղուանեան, երբեմն փոխ վանահայր Վարագայ վանքին Վանայ, Մշոյ և Կարսի Առաջնորդ, Էջմիածնի Սինօգի անդամ:
3. Սահակ եպիսկոպոս Այվատեան, քարոզիչ ի Պօլիս, Պելէճեկի, Մարսէլի հովիւ և Գալփէճի արդի առաջնորդ:
4. Գուսիկ վարդապետ Գալփիակճեան, քաջ անգղիացի, յայտնի քարոզիչ, երբեմն խմբագիր «Վասպուրական Արժւոյն» և «Սալնոյ ձոր» անուն ձեռագիր լրագրին, Վարագայ վարժարանի փոխ տեսուչ և ուսուցիչ մի քանի առարկայից:
5. Ղեւոնդ վարդապետ Փիրղալէմեան Վանեցի, նշանաւոր է իր հուարած մեծահասակ յիշատակարաններով, հեղինակութիւններ ունի, երբեմն հոգեւոր հովիւ էր Լօնդոնի Հայոց, քարոզիչ ի Պօլիս և անդամ Վ. Պօլոյ Ազգային ժողովին:
6. Մատթէոս վարդապետ, փոխ վանահայր Վարագայ և Հոգեաց վանից, Վանեցի:
7. Մեսրոպ վարդապետ Փափաղեան Վանեցի, ուսուցչութեան պաշտօն վարած է Վանի և այլ գաւառաց մէջ, մի քանի փոքր գրքուածներ ունի հրատարակած:
8. Թադէոս վարդապետ Աստուածատրեան Վանեցի, երբեմն Լիմ և Կոուց անապատաց վանահայր էր, Վարագայ վանքի փոխ տեսուչ, չորիցս Վանայ Առաջնորդական տեղապահ եղաւ:
9. Մելքիսեդէկ վարդապետ Վանեցի, յայտնի քարոզիչ, վանահայր սուրբ Խաչի վանից:

10. Կիւրեղ վարդապետ և Յակոբոս վարդապետ Հահպաղեան Վանեցի, Վանայ այլ և այլ գաւառաց և վանքերի մէջ պաշտօններ վարած են և Վարագայ մէջ ուսուցչութեամբ պարտաւար են, երկուքն էլ մանր գրուածներ ունին:

11. Գրեգոր վարդապետ Չինկէրեան Վանեցի, երկար տարիներ վանահայրական պաշտօն վարեց Սքանչեւագործու վանից, յայտնի քարոզիչ էր:

12. Թարութիւն վարդապետ, Վրթանէս վարդապետ, Հմայեակ, Ստեփան, Մարկոս վարդապետներ, իբրև Վարագայ վանքի միաբաններ, զանազան պաշտօններ վարած են վանքի և շրջակայ գաւառաց մէջ:

Վարագայ վանքի ընթացաւարտ աշակերտներ, որոնք կուսակրօն քահանայ ձեռնադրուելով անցան ի շարք միաբանական ուխտին և յայտնի ծառայութիւններ մատուցին ազգին զանազան ժամանակներում:

1. Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեան, փոխ խմբագիր «Վասպուրական Արժւոյն», խմբագիր «Արժուիկ Տարօնոյ», թերթին. յայտնի հեղինակութիւններ ունի, վանահայրական և առաջնորդական պաշտօններ վարած է ի Վան, ի Մուշ, յԱլի, ի Տրապիզոն, ի Տիգրանակերտ, Հայաստանի այցելու հովիւ եղած է, վերջի տարիներ Պօլոյ կետրոնական դպրոցին ուսուցիչ էր և քարոզիչ Բերայի սուրբ Երրորդութեան եկեղեցւոյն:
2. Արսէն վարդապետ Թօխմախեան, հրապարակախօս, գրուածներ ունի, մի տարի էլ «Արժւոյ» խմբագրութիւն ստանձնեց:
3. Մեսրոպ վարդապետ Մոկացեան, Վարագայ վանքի փոխ-վանահայրութիւն արաւ երկար տարիներ, դպրոցին էլ տեսուչ էր մի ժամանակ:
4. Նիկիէ վարդապետ Տէր Մեսրոպեան, Բաղէշի առաջնորդ եղաւ, յայտնի քարոզիչ էր, գրուածներ ունի:
5. Ստեփան վարդապետ Աղաղատեան, Վանայ Առաջնորդ էր, այժմ Լիմ անապատի վանահայր է:
6. Դանիէլ վարդապետ Թօսունեան, Վարագայ վանքի տեսուչ, յայտնի գործիչ Վանայ վերջին դէպքերում:
7. Արիստակէս վարդապետ Տէր Սարգսեան, Տրապիզոնի և Բաղէշի առաջնորդ եղաւ, ժողովրդական կեանքէն ընտիր գրուածներ ունի հրատարակուած:
8. Եգնիկ վարդապետ, Թարութիւն վարդապետ, Աւետիս վարդապետ, Ստեփան, Ամբրոսիոս, Մովսէս և Կիրակոս վարդապետներ, իբրև

Վարազայ վանքի միաբաններ օգտակար ծառայութիւններ մատուցած են վանքի և շրջակայ գաւառների մէջ:

Վարազայ վանքի դպրոցէն ելած քահանաներ, որոնք թէ քաղաքի և թէ շրջակայ գիւղերի մէջ օգտակար եղած են իրենց հովուութեան յանձնեալ ժողովրդին:

Ղևոնդ քահանայ Ընդոյեան, Գէորգ Տէր Աբրահամեան, Երեմիա քահանայ, Վահան քահանայ, Խաչատուր, Սահակ, Մկրտիչ, Եղնիկ, Մարտիրոս, Լևոն, Մարգար, Յովհաննէս, Սողոմոն և Մեսրոպ քահանաներ:

Աւելի քան յետուն ուսուցիչներ ելած են Վարազայ վանքի վարժարանէն, որոց երեքը խմբագիր եղած են, մի քանիսն էլ ընտիր գրուածներ ունին հրատարակած, ինչպէս է Տիգրան Ամբեմանեան, Մանուէլ Անանեան, Նշան Ընդուանեան ևն:

Արդոյ եւ սիրելի պարոն.

Զգիր քո առաքեալ առ իս ի 15 ամսոյս հանդերձ քերթուածովքդ ընկալայ, ընդ ներողամիտ գովութիւնսդ յոյժ ամաչեցի, իսկ ինդութիւն միայն այն եղև ինձ, զի զայդպիսի աննախանձ բարեկնդիր ոգի ծանեայ յԱզդիս և միանգամայն այդչափ սիրատենչ և փոյթ քաջ աշակերտեալ բուն հին նախնեացն զեղեցիկ ակորժանաց, և գոհութիւն վասն այսորիկ մատուցի նախ Աստուծոյ և ապա սովին զրովք պարտ վարկանիմ մատուցանել քում Սիրելութեանդ և ազաչեմ սիրողարար ընդունել զսերտ սրտիւ շնորհակալութիւնս, նա և զգարմանս իմ ընդ այդ քաջութիւն զըշիդ, որով ճշմարտես յանձին և ի զիր զասացեալդ ի քէն, թէ:

Զօդ ծծեալ Հայաստանեայց շոյս զգացի զօգի նախնեացն. վասն որոյ և ոչինչ ունիմ ասել յուղղութիւն զրելոցդ, բայ ի զեղեցիլոյ անտի զգովեստոյ զինէն: Իսկ ընդ համեստ և ծանր բանիցն ոչ սակաւ և զուարճութիւն համարիմ եւ տեսանիլ ի նոսա, եթէ նախաւոյս գոչութիւնք և նոցին վաղեմի չափոյ ակորժակք հարկաւ և զուարճակք իցեն հայրենասէր ոգւոյ վասն որոյ և առաջին պատեհաւ առաքեցի զամենայն տառսդ ի վանս մեր յեռու ի Բագմալէպն, եթէ որպէս ինձ, և նոցա հաճոյ թուեսցի:

Ներեսցիր ինձ զայս և եթ յուշ առնել իմաստութեան քում թերեւ յօղուտ առ յապա փափաղելի երգոցդ ի նոյն չափս, զի քո կարի յաճախեալ է և անխափր յայս տաղ զիւցազնական եռափանկ գնել զչորրորդ անգամն, զոր իմ պատշաճագոյն դատեալ ի թատերական աշխոյժ զրուցատրութեան չափս, կամ յայլ նման օրինակն (յոջն էջ 91 ծան. Որատ. քերթ. ծան. 80). վասն որոյ և զուն ուրեք խառն վարեալ է ընդ քառափանկ չորրորդ անգամն զիւցազնական տաղից:

Ողջ լինել ըղձանամ քում Ազնուութեանդ,

Ն. Յ. Ա. Կ. Բագրատունի

իմառիս Խոսրոս

ի Խուրուշեշմէ 20 Ապրիլ, 1849.

Առ ազնիւ պ. Մկրտիչ Խրիմեան

ՄԱՅՐ ԱԹՈՒ

ՎԵՆԷՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ.

Յորին Վեհափառութիւնը, վատ եղանակների պատճառաւ իւր վաղուց մտադրած ուղեւորութիւնը զէպի Տփլիսի բաւական ժամանակ յետաձգելուց յետոյ՝ բարեհաճեց մեկնել Մայր Աթոռից շարաթ մարտ 11-ին: Մինչև Երեւան Հոգեւոր Տիրոջ ուղեկցում էին Տեղապահ Գեր. Արիստակէս արքեպիսկոպոսը, Գեր. Մակար եպիսկոպոս և Տ. Ղևոնդ, Կարապետ և Գարեգին Յովսէփեան վարդապետներ, իսկ մինչև Տփլիս՝ Տ. Գարեգին Սաթուրեան, Առաք. և Կորիւն վարդապետներ: Երեւանում Յորին Վեհափառութեան յայտնեցին, որ ճանապարհը բոլորովին խանդարուած է և անցուղարձը զրեթէ անհնարին դարձած. կարծում էին, թէ հարկաւոր կլինի մինչև տասն օր սպասել, բայց պ. Յահանգապետի մասնաւոր կարգադրութեամբ փութացրին աշխատանքը խանդարուած տեղերը կարգի բերելու համար, և Հոգեւոր Տէրը 14-ին կարողացաւ շարունակել ուղեւորութիւնը. ապա անփորձ և ապահով Տփլիսի հասաւ մարտի 17-ին: Տփլիսի Գեր.